№ 84 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 29 1889 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 29 № 84

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինքնավարութեան խնդիրը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի գիծ Թիւրքաց Հայաստանի տնտեսական դրութիւնից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պարիզից.

ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Շատ տարիներ են անցել արդէն այն օրից, երբ առաջին անգամ կովկասում մտցրվեց քաղաքային ինքնավարութիւնը,—բայց մինչև այժմ էլ մեր ժողովրդի մէջ չեռ ևս ինքնավարութեան խնդիրը ունի իր հակառակորդները։ Այդ հակառակորդները, իսկապէս ասած, մեծ մասամբ ինքնավարութեան սկզբունքի հակառակորդներ էլ չեն, այլ նրանք սովորաբար այն կարծիքն են պաշտպանում, որ մեր գաւառական զանազան քաղաքները դեռ ևս այնքան հասունացած չեն, որ կարողանան ըմբռնել քաղաքային ինքնավարութեան արժէքը, ինքնավարութեան ըսկզբունքը և այդ պատճառով քաղաքային ինքնավարութիւնները ապարդիւն և վաղաժամանակեայ են համարվում։ Մենք չենք խօսում այն տեսակ կարծիքի մասին, որը ընդհանրապէս ապարդիւն և վնասակար է համարում քաղաքային ինքնավարութիւնը,—որովհետև այդ կարծիքը արդէն շատ հնացած և մեռելութեան է դատապարտված։ Բայց չենք կարող չը նկատել, որ սխալ է և ոչինչ քննադատութեան չէ կարող դիմանալ այն կարծիքը, որ իբրև թէ մեր գաւառական քաղաքները դեռ ևս պատրաստված չեն քաղաքային ինքնավարութիւն ունենալու համար, ուրեմն չը պէտք է ինքնավարութիւն ունենան։ Ցաւալին այն է, որ նոյն իսկ Անդրկովկասի այնպիսի գաւառական քաղաքներում, ուր արդէն գոյութիւն ունեն քաղաքային ինքնավարութիւն և քաղաքային դումաներ, ինչպէս օրինակ, Երևան, Ախալցխա, տեղական հասարակութեան մի մասը մինչև այժմ էլ չէ հաշվում քաղաքային ինքնավարութեան գաղափարի օգտաւէտութեան հետ։ Տեղական դումաները դառնում են շատ անգամ ինտրիգների կենտրոն, և ձայնաւորների ընտրութեան ժամանակ ընտրողները՝ ղեկավարվելով միմիայն անձնական շահերի և կուսակցական նեղ ձգտումների տեսակէտով, ոտի տակ են տալիս հասարակութեան շահերը և փոխանակ արժանաւոր ձայնաւորներ և քաղաքագլուխ ընտրելու մասին հոգալու, տրքնում են առաջ մղելու իրանց կուսակիցներին՝ եթէ մինչև անգամ նրանք միանգամայն անարժան և անընդունակ էլ լինեն։ Այդպիսի անմիտ և անձնական տեսակէտներով ղեկավարվելով, գործելով միմիայն կուսակցական կրքերով, զբաղվելով միմիայն այս և այն անձի թեկնածութեան հարցով և մուայցութեան տալով քաղաքի շահերը և նոյն իսկ քաղաքային ինքնավարութեան կանոնները, շատ անգամ այն հեռևանքին են հասնում, որ ընտրութիւնները չեն հաստատվում, ինչպէս նորերս պատահեց Ախալցխայում, և կամ „ջուր պղտորելով“ յետաձգում են ընտրութիւնները՝, ինչպէս նորերս տեղի ունեցաւ Երևանում։

Այդ բոլորը, ի հարկէ, միանգամայն տխրալի է, և անպայման դատապարտելի։ Դրա դէմ խօսք լինել չէ կարող։

Սակայն պէտք է իմանալ, որ մեծ տարբերութիւն կայ մի սկզբունքի օգտաւէտութեան և նրա գործադրութեան աջող կամ անաջող լինելու մէջ։ Եթէ մեր գաւառական մի քանի քաղաքներում քաղաքային վարչութիւնների գործունէութեան մէջ պատահում են զանազան նոյն իսկ շատ հակակրելի՝ զեղծումներ, ինտրիգներ և անկարգութիւններ,—այդ դեռ չէ նշանակում թէ այդտեղ մեղաւորը քաղաքային ինքնավարութեան սկզբունքն է։ Բոլորովին ոչ։ Եթէ մի սկզբունք միշտ համակրելի է սկզբունքով, և եթէ այս և այն սկզբունքը ի չարն են գործ ածում, այդ դեռ ապացոյց չէ, որ վնասակար կամ ապարդիւն է նոյն ինքն սկզբունքը։ Եթէ քաղաքային ինքնավարութեան սկզբունքից ըստ ամենայնի օգտվել չեն կարողանում մեր գաւառական քաղաքները,—այդ չէ նշանակում թէ ինքը քաղաքային ինքնավարութեան սկզբունքն է ապարդիւն և անօգուտ։ Այդ դէպքում մեղաւորը միմիայն ինքն հասարակութիւնն է, որ չէ կամենում կամ ընդունակ չէ օգտվելու իրան տուած իրաւունքներից, որ չէ հասկանում ինքնօգնութեան և ինքնագործունէութեան գաղափարների արժէքը, և իրան տուած իրաւունքները նոյն իսկ ի վնաս իր շահերի է գործադրում։ Դրա մէջ մեղաւոր է արդէն ինքն հասարակութիւնը։

Բայց որպէս զի այդ նոյն անպատրաստ, և ինքնավարութեան մէջ անվարժ հասարակութիւնը փոքր առ փոքր կարողանայ օգտվել ինքնավարութիւնից, որպէս զի քաղաքային դումաները փոքր առ փոքր սկսեն աւելի արդիւնաւէտ կերպով գործել, և դառնալ քաղաքի բարգաւաճման և կանոնաւորութեան ղեկավարող ոյժեր,—դրա համար հարկաւոր է որ այդ նոյն հասարակութիւնները ունենան քաղաքային ինքնավարութիւններ, որպէս զի վարժվեն ու սովորեն իրանք իրանց ձեռքով ղեկավարելու իրանց գործերը, որպէս զի ընտելանան ինքնուրոյն գործունէութեան։

Ամեն մի նորութիւն, ամեն մի նոր գաղափար և նոր միտք սկզբում կարող է անաջողութեան հանդիպել։ բայց այդ դեռ չէ նշանակում թէ պէտք է այդ նոր գաղափարը և նոր միտքը ջախջախել, ոչնչացնել և արմատախիլ անել, և սպասել մինչև որ ժողովուրդը կը պատրաստվի հասկանալու և ըմբռնելու նրանց։ Դա մի սըխալ հայեցակէտ կը լինի, որովհետև ժողովուրդը չէ կարող ընտելանալ այն բաներին, որ չը կայ իր մէջ, որովհետև ժողովուրդը չէ կարող հասկանալ այնպիսի մի միտք, որի գոյութեան մասին նա տեղեկութիւն չունի։ Հենց այդ պատճառով մեր քաղաքային վարչութիւնների սկզբնական գործունէութեան անաջողութիւնը ոչ թէ միայն յուսահատութիւն չը պէտք է պատճառէ ոչ ոքին, այլ ընդհակառակը՝ համարելով այդ բոլորը մասամբ բնական մի երևոյթ մեր ինքնագործունէութեանն անվարժ հասարակութիւնների մէջ, պէտք է աշխատել, որ որքան կարելի է շատանան մեր գաւառական քաղաքներում քաղաքային ինքնավարութիւնները, քանի որ քաղաքային ինքնավարութիւններ ունենալով, տեղական հասարակութիւնները փոքր առ փոքր կարող կը լինեն վարժվել ինքնավարութեան մէջ, կընտելանան ինքնավարութեան հետ կապված մտքերի հետ, և այդպիսով տարիներ անցնելուց յետոյ այլ ևս չեն անի այն սխալները, որոնք սովորական էին սկզբում քաղաքային վարչութիւնների հիմնարկութեան առաջին տարիներում։ Ուստի ոչ թէ միանգամայն սխալ և վնասակար պէտք է համարվի այն կարծիքը, թէ մեր գաւառական զանազան քաղաքների հասարակութիւնները անպատրաստ են ինքնավարութիւն ունենալու, այլ և անհրաժեշտ է որ գաւառական զէթ մեծ քաղաքները, ինչպէս օրինակ Շուշի, Ալէքսանդրապոլ, Գանձակ, և այլն, որոնք մինչև այժմ չունեն քաղաքային ինքնավարութիւններ, որքան կարելի է շուտով ունենան տեղական քաղաքային վարչութիւն, որպէս զի միջոց ունենան վարժվելու ինքնավարութեան մէջ, և սովորեն իրանց տեղական բազմազան պէտքերը տեղն ու տեղը հոգալ և իրանց սեփական ոյժերով գործել։

Մեր հասարակութեան մէջ թոյլ է ինքնօգնութեան գաղափարը. ժամանակի ընթացքում նրա մէջ թուլացել է իր սեփական ոյժերով իր պէտքերը հոգալու ձգտումը, և նա այնքան է վարժվել ամեն օգնութիւն ու նախաձեռնութիւն դրսից և ուրիշից ստանալու մտքին, որ անհրաժեշտ է փոքր առ փոքր արմատախիլ անել նրա այդ վնասակար և հակակրելի յատկութիւնը, ընտելացնելով նրան ինքնօգնութեան, ինքնավարութեան և սեփական խելքով ու սեփական ոյժերով գործելու մտքին։

Խ. Մ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ախալցխա, յուլիսի 4-ին

«Մշակի» № 72-ի մէջ կարդացի մի թղթակցութիւն իմ երեցփոխանական եռամեայ գործունէութեան մասին։ Պ. թղթակիցն ասում է. «այդ երեցփոխանը իր գործունէութեամբ արդէն յայտնել է հասարակութեան մէջ կասկածանք և թերահաւատութիւն....»։ Հետաքրքիր է իմանալ, թէ որ հասարակութիւնն է իմ մասին այդ գաղափարը կազմել.... Արդեօք չէր կարելի մի քանի տասնեակ մարդկանց անունը յիշել.... որպէս զի իմանայինք թէ թղթակցի կարծիքով քանի մարդ են հասարակութիւն կազմողները։ Միթէ թղթակցին յայտնի չէ, որ ես իմ եռամեայ պաշտօնավարութեան ժամանակ երեք անգամ հրաժարական եմ տուել, որովհետև ես չեմ կամենում տանջվել հոգևոր կառավարութեան և քահանաների ձեռքում։ Եթէ հասարակութիւնը կասկածում է իմ մասին, ապա ինչպէս է պատահում որ նոյն հասարակութիւնը ինքն իսկ ի վնաս իր շահերի է գործադրում։ Դրա մէջ մեղաւոր է արդէն ինքն հասարակութիւնը։

Բայց որպէս զի այդ նոյն անպատրաստ, և ինքնավարութեան մէջ անվարժ հասարակութիւնը փոքր առ փոքր կարողանայ օգտվել ինքնավարութիւնից, որպէս զի քաղաքային դումաները փոքր առ փոքր սկսեն աւելի արդիւնաւէտ կերպով գործել, և դառնալ քաղաքի բարգաւաճման և կանոնաւորութեան ղեկավարող ոյժեր,—դրա համար հարկաւոր է որ այդ նոյն հասարակութիւնները ունենան քաղաքային ինքնավարութիւններ, որպէս զի վարժվեն ու սովորեն իրանք իրանց ձեռքով ղեկավարելու իրանց գործերը, որպէս զի ընտելանան ինքնուրոյն գործունէութեան։

Ամեն մի նորութիւն, ամեն մի նոր գաղափար և նոր միտք սկզբում կարող է անաջողութեան հանդիպել։ բայց այդ դեռ չէ նշանակում թէ պէտք է այդ նոր գաղափարը և նոր միտքը ջախջախել, ոչնչացնել և արմատախիլ անել, և սպասել մինչև որ ժողովուրդը կը պատրաստվի հասկանալու և ըմբռնելու նրանց։ Դա մի սըխալ հայեցակէտ կը լինի, որովհետև ժողովուրդը չէ կարող ընտելանալ այն բաներին, որ չը կայ իր մէջ, որովհետև ժողովուրդը չէ կարող հասկանալ այնպիսի մի միտք, որի գոյութեան մասին նա տեղեկութիւն չունի։ Հենց այդ պատճառով մեր քաղաքային վարչութիւնների սկզբնական գործունէութեան անաջողութիւնը ոչ թէ միայն յուսահատութիւն չը պէտք է պատճառէ ոչ ոքին, այլ ընդհակառակը՝ համարելով այդ բոլորը մասամբ բնական մի երևոյթ մեր ինքնագործունէութեանն անվարժ հասարակութիւնների մէջ, պէտք է աշխատել, որ որքան կարելի է շատանան մեր գաւառական քաղաքներում քաղաքային ինքնավարութիւնները, քանի որ քաղաքային ինքնավարութիւններ ունենալով, տեղական հասարակութիւնները փոքր առ փոքր կարող կը լինեն վարժվել ինքնավարութեան մէջ, կընտելանան ինքնավարութեան հետ կապված մտքերի հետ, և այդպիսով տարիներ անցնելուց յետոյ այլ ևս չեն անի այն սխալները, որոնք սովորական էին սկզբում քաղաքային վարչութիւնների հիմնարկութեան առաջին տարիներում։ Ուստի ոչ թէ միանգամայն սխալ և վնասակար պէտք է համարվի այն կարծիքը, թէ մեր գաւառական զանազան քաղաքների հասարակութիւնները անպատրաստ են ինքնավարութիւն ունենալու, այլ և անհրաժեշտ է որ գաւառական զէթ մեծ քաղաքները, ինչպէս օրինակ Շուշի, Ալէքսանդրապոլ, Գանձակ, և այլն, որոնք մինչև այժմ չունեն քաղաքային ինքնավարութիւններ, որքան կարելի է շուտով ունենան տեղական քաղաքային վարչութիւն, որպէս զի միջոց ունենան վարժվելու ինքնավարութեան մէջ, և սովորեն իրանց տեղական բազմազան պէտքերը տեղն ու տեղը հոգալ և իրանց սեփական ոյժերով գործել։

Մեր հասարակութեան մէջ թոյլ է ինքնօգնութեան գաղափարը. ժամանակի ընթացքում նրա մէջ թուլացել է իր սեփական ոյժերով իր պէտքերը հոգալու ձգտումը, և նա այնքան է վարժվել ամեն օգնութիւն ու նախաձեռնութիւն դրսից և ուրիշից ստանալու մտքին, որ անհրաժեշտ է փոքր առ փոքր արմատախիլ անել նրա այդ վնասակար և հակակրելի յատկութիւնը, ընտելացնելով նրան ինքնօգնութեան, ինքնավարութեան և սեփական խելքով ու սեփական ոյժերով գործելու մտքին։

Խ. Մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐԻԶԻՑ

XVI

Պարիզի ներկայ տարվայ ցուցահանդէսը այնքան մեծ է, որ ճշմարիտ մի ամիս էլ բաւական չէ բոլոր շինութիւնները շրջագայելու համար, ուր մնաց բոլորը մանրամասնաբար նկարագրելու.... Մի քանի անգամ գնացած լինելով ցուցահանդէսի մեքենաների բաժինը, ես մինչև այժմ չը կարողացայ նկարագրել ձեզ, գոնէ հարևանցօրէն, այդ հրաշալի բաժինը, որը ներկայացնում է մեզ տասն և իններորդ դարի մեքենագործական ոգին, իր ամբողջ փառահեղութեամբ....

Տասն և իններորդ դարը իրաւամբ կարելի է անուանել մեքենաների դար և Պարիզի այժմեան ցուցահանդէսը ամփոփել է իր Palais des machines ահռելի բաժնում այն բոլոր բազմատեսակ և բազադրեալ մեքենաները, որոնք կատարելագործելով մարդկային աշխատանքը, կանգնած են ձեր առջև որպէս պերճախօս վկաներ մարդկային հանճարի, արդարացնելով այն կարծիքը, որ այժմեան դարը երկաթի և մեքենաների դարն է.... Նայելով այդ անթիւ երկաթեայ հրէշների վրա, տեսնելով գործունէութեան մէջ այդ հրէշների երկաթեայ բազուկները,—մարդս համ ահ ու սարսափ է զգում, համ էլ չէ կարող զսպել իր զարմանքն ու հիացումը և գոնէ իր սրտում չը պարծենալ թէ ինքն էլ այդ հանճարեղ մարդկութեան մի անդամ է....

Ամենաազդու տպաւորութիւն է գործում ձեզ վրա մեքենաների բաժինը, եթէ դուք մտնում էք մեքենաների հրաշալի պալատը՝ կէսօրից յետոյ, երբ բոլոր մեքենաները գործունէութեան մէջ են դանվում։ Հաղարաւոր գործող անիւների աղմուկը աննկարագրելի է, կատարելապէս իլացուցիչ է. այդ ահագին միջազգային գործարանի տեսքը ապշեցնող է.... Դուք մի քանի րոպէ մնում էք արշարժ կանգնած մուտքի մէջ, դուք չէք կարող մի խօսք անգամ արտասանել.... Եւ այնուհետև, երբ սկսում էք խօսել, ձեր հարևանից մի որ և է բացատրութիւն խնդրելով,—դուք չէք կարող լսելի անել ձեր ձայնը և չէք լսում ձեր խօսակցի պատասխանը, այն աստիճան խլացուցիչ է այդ հրէշաւոր միջազգային գործարանի գործունէութեան աղմուկը։

Ապա փոքր ինչ ուշքի գալով, փոքր ինչ հանգստանալով առաջին ազդու տպաւորութիւնից, դուք ակամայ ձեր ուշադրութիւնը դարձնում էք նախ և առաջ անթիւ անհամար մեքենաներ պարունակող շինութեան վրա։

Ես խօսեցի իմ թղթակցութիւններիս մէջ էյֆելեան աշտարակի մասին, խօսեցի և արդիւնադրութիւնների պալատի շինութեան և այդ շինութեան հրաշալի մուտքի մասին,—բայց և մեքենաների պալատը չէ կարելի չանուանել՝ ճարտարապետութեան հրաշք....

Երևակայեցէք ձեզ մի հրէշաւոր շինութիւն, ամբողջապէս երկաթից կառուցված, որի ոչ թէ միայն առաստաղը, բայց և բոլոր պատերը ամբողջապէս երկաթից կառուցված, որի ոչ թէ միայն առաստաղը, բայց և բոլոր պատերը ապակիով են ծածկված.... Երկաթեայ հզօր կամարները հանդստանում են երկաթեայ սիւների վրա, որոնց ձեր մինչև այժմ ճարտարապետական արհեստի մէջ երբէք գործածական չէ եղել. այդ սիւները սրածայր են իրանց ներքևի մասում և շարժական են. դա, ինչպէս ասեցի, ճարտարապետական մի կատարեալ հրաշք է.... Ամբողջ շինութեան տարածութիւնը անհաշիւ է. նա հաւասար է 80,400 քառակուսի մետրի։ Շինութեան բարձրութիւնը 48 մետր է, այնպէս որ եթէ Պարիզի հռչակաւոր «Յաղթական կամարը» (Arc de Triomphe), կամ Վանդոմեան սիւնը այդ շինութեան տակ դնէին,—նրանք չէին հասնի մեքենաների պալատի առաստաղին։ Եւ հասկանում էք ինչ բան է 80,400 քառակուսի մետր տարածութիւն.... այդ տարածութեան վրա կարող էր հեշտութեամբ զիշերել 30,000 հոգուց բաղկացած մի զօրք, իւրաքանչիւր զինուորը գրաւելով մօտ 3 քառակուսի մետր տարածութիւն և բացի սրանից, շուրջ անցնող գալերէյայում դեռ կարելի էր տեղաւորել 15,000 ձիեր, իսկ նոյնքան ձիաւորներին պահակեցնել շինութեան երկրորդ յարկում....

Առաջին հայեացքից մեքենաների պալատը այնքան բարձր չէ երևում, որ կարելի լինէր մըտածել թէ Պարիզի «Յաղթական կամարը», կամ «Վանդոմեան սիւնը» կարողանային տեղաւորվել այդ շինութեան մէջ, որովհետև մեքենաների պալատը այնքան ընդարձակ է, որ նրա բարձրութիւնը համեմատաբար այն աստիճան մեծ չէ երևում։ Միայն երբ նայում էք պալատի մէջտեղ դրված համբարձող մեքենայի (ascenseur-ի) վրա, դուք համոզվում էք թէ յատակից մինչև առաստաղը ահագին տարածութիւն կայ։

Մեքենաների պալատը բաղկացած է իսկապէս երեք յարկերից. 1) նկուղներից, որոնց մուտքը այցելուներին արգելված է և որտեղ գործում են թէ այն մեքենաները, որոնք շարժման մէջ են զցում առաջին յարկի մեքենաները և թէ գազային ու էլէկտրական լուսաւորութիւնը պատրաստող մեքենաները. 2) այն յարկից, որտեղ գտնվում են հանդէս դրված բոլոր մեքենաները և վերջապէս 3) լայն պատշգամբի պէս շինված երկրորդ յարկից, որտեղ հանդէս են դրված փոքր մեքենաներ և գործիքներ, բայց գլխաւորապէս այլ և այլ մոդէլներ։

Ի դէպ պէտք է ասել, որ այդ մոդէլների թըւում իրանց վրա առանձին ուշադրութիւն են

կածում էր ինձ վրա, ինչի հրաժարականներիս ժամանակ նոր երեցփոխ չընտրեց։

Հրապարակով խոստովանում եմ, որ իմ երեցփոխանութեան ժամանակամիջում եկեղեցի չեմ գնացել, գանձանակ չեմ շրջեցրել. պատճառն այն է եղել, որ քահանաները իմ դէմ լարված էին և ես մտնելով եկեղեցի՝ միշտ կռիւ և աղմուկ պիտի լինէր։ Ես յարմար դատեցի հեռանալ այդ քահանաներից, որոնք իրանց կոչումը ծառայեցնում էին անձնական կրքին, բայց և այնպէս իմ երեցփոխանութեան ժամանակ այդպիսի հանգամանքներում աւելի եկամուտ է եղել, քան թէ իմ նախորդի ժամանակ։ Հաշիւներից երևում է, որ բացի մոմերից, նախկին երեցփոխը ինձ յանձնել է 406 ր. 71 կ., իսկ ես նոր երեցփոխին յանձնել եմ՝ 1,268 ր. 5 կոպ., ուրեմն որտեղ է իմ ցոյց տուած նուազ եկամուտը։ Թղթակիցը զարմանում է, որ հաշուէմատեանի մէջ երեցփոխական զրասենեակի ծախսերը քերված են և փոխանակ 7 բուբլ լինելու, 15 բուբլի է սրբագրված։ 1886 թուին, այդ ծախսը իմ ազատ կամքով և խղճով նշանակել էի 7 բուբլի, իսկ միւս տարիները տեսնելով, որ այդ 7 բուբլին չէ բաւականանում, նշանակվեց 15 բուբլի։ Գրագիրս սկզբում մաքուր մատեանների մէջ փոխանակ 15-ի, գրել էր 7 բուբլի, որ և վերջը քերվեց, տակը աւելացնելով թղթակցի յիշած ծանօթութիւնը։ Թղթակիցն ասում է. «Երեցփոխը, առանց տեղական հոգևոր իշխանութեան համաձայնութեան և գիտութեան, տուել է եկեղեցական գումարից N. N.-ին մի հարիւր բուբլի»։ Շատ ճշմարիտ է. ես եկեղեցական գումարից մի 100 բուբլի տուել եմ Ախալցխայի նախկին յաջորդ Խորէն ծ. վարդապետ Ստեփանէին, հասարակութեան տուած համախօսականով, որը գտնվում է սուրբ սինոդում։ Այժմ, եթէ հոգևոր իշխանութիւնը չէ ընդունում այդ 100 բուբլին իբրև ծախս, թող ստանայ համախօսականը ստորագրող 264 անձինքներից։ Իսկ ինչ վերաբերում է փոխառութեան առմամբ տիրած ընկնելուն, այս հանգամանքում կրկնակի յանցաւորը իմ հաշուատեսներն են և հոգևոր իշխանութիւնը, քանի որ տոմսերի համարները գրված են հոգևոր կառավարութեան մէջ։ Հոգևոր կառավարութեանը անպատճառ յայտնի կը լինէր, որ տոմսերից մինը տիրած է ընկել, ինչի չէր յայտնում ինձ։

Երբ մի անաչառ քննիչ կամ յաջորդ կունենանք, երբ նա կը քննէ հին գործերը և բոլոր երեցփոխանների հաշիւները, այն ժամանակ թէ թղթակիցը և թէ ընթերցողը կիմանան, թէ ինչեր կան գրելու և ինչեր են գրվում։

Նախկին երեցփոխ՝ Ներսէս Իգիթխանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կ. Պոլսից ստացանք հետևեալ տեղեկութիւնները. «Հինգշաբթի օր, յուլիսի 13-ին, Խորէն Պատրիարքը գնաց արքունի պալատը կայսեր ներկայացնելու համար մի հեռագիր, որը ստացել էր Վանից։ Վանեցիք այդ հեռագրով բողոքում են իրանց կուսակալ Խալիլ պէյի դէմ։ Վանեցիք ամբաստանում են իրանց կուսակալին այն բանում, որ նա դիտմամբ կեղծ լուրեր է չինում, իբր թէ վանեցիք ապստամբութիւն են պատրաստում օսմանեան կառավարութեան դէմ, և ինքը Խալիլ պէյ զսպում է այդ ապստամբներին։ Խալիլ պէյի նպատակն է այդպիսով արժանանալ կայսերական շնորհներին։ Վանեցիք բողոքում են նաև թէ՝ կառավարիչը բռնի ստորագրութիւններ է հաւաքում իրանցից և հեռագրեր է խփում Պոլիս, և այդ հեռագրերի մէջ իրանց լսել է տալիս թէ՝ կատարելապէս համերաշխ են հայերն իրանց տաճիկ և քիւրդ հայրենակիցների հետ։ Արդ, վանեցիք բողոքում են թէ՝ երբէք իրանք համերաշխ չեն քիւրդերի հետ, որոնց վրա նայում են իբրև իրանց պատուհասի վրա։ Այս հեռագիրը Վանից ուղղված է ուղղակի կայսեր։ Չինգ տարի առաջ կայսրը մի հրաման էր տուած թէ՝ երբ գաւառի մը ժողովուրդը բողոք ունի կառավարչին կամ ուրիշ պաշտօնեաների դէմ, և կուզենան իրանց բողոքը հեռագրել կայսրին, հեռագրատան պաշտօնեաները պարտական են ընդունել այդ հեռագրերը, և տեղական իշխանութիւնը չէ կարող արգելել հեռագրի փոխանցումը։ Այդ հրամանի զօրութեամբ, վանեցիք կարողացել են իրանց հեռագիրը ուղարկել կայսեր։ Սակայն վանեցիք այդ հեռագրի մի պատճէնն էլ ուղարկել են պատրիարքին։ Այդ պատճէնն է ահա, որ պատրիարքը տարաւ պալատը։ Եըլդզի պալատի մէջ պատրիարքը տեսակցութիւն է ունենում նախ երկրորդ սենեկապետ Հաֆի-Ալի պէյի հետ, ապա առաջին քարտուղար Սուրէյա-փաշայի հետ։ Սուրէյա-փաշա գնում է կայսրի մօտ և ապա գալիս է հաղորդելու կայսրի պատասխանը։ Կայսրը շատ գոհ է Խալիլ պէյից, հաւատում է վանեցիների դէմ եղած ամեն ամբաստանութիւններին, և չէ կարող թոյլ տալ, որ իր ընտրած պաշտօնեաների դէմ մի ուրիշը գանգատանի, և չէ ուզում, որ պատրիարքը միջամտի այդպիսի խնդիրների մէջ։ Կայսրը շատ դժգոհ է, որ հայերը թէ գաւառների մէջ և թէ Եւրոպայում օսմանեան կառավարութեան դէմ խլրտումներ են անում։ Յետոյ Մուսա-պէյի վրա խօսելով, Սուրէյա-փաշա յայտարարում է թէ՝ կայսրը բնաւ չէ հաւատում Մուսա-պէյի դէմ եղած ամբաստանութիւններին։ Պատրիարքը նկարագրում է գաւառի հայոց թշուառ վիճակը. «Ինչ կրնամ ընել, ասում է, երբ իմ ժողովուրդ կը չարչարուի, կը նեղուի, կը գաղթէ»։ Սուրէյա-փաշա ասում է թէ՝ կայսրը միշտ հոգածութիւն ունի իր ամեն կարգի հպատակների վրա և յանձնարարում է պատրիարքին՝ լաւ առաջնորդներ դնել գաւառներում ու ժողովրդին խրատել որ հանդարտ կենայ, և եկեղեցիներին մէջ աղօթել կայսրութեան համար։ Նա աւելացնում է նաև, որ կայսրը փափագում է տեսնել պատրիարքին շրջապատված այնպիսի անձինքներով, որոնք թէ պատրիարքի և թէ կառավարութեան վստահութիւնն են վայելում։ Պատրիարքը վերադառնում է պատրիարքարան և նոյն գիշերը մի քանի եկեղեցիների մէջ աղօթք է անել տալիս»։

—

Տրապիզոնից մեզ գրում են. «Մուսա պէյի դէմ վկաներն կը սպասուին այստեղ, սակայն կը լսենք թէ կառավարութիւնը արգելքներ կը յարուցանէ. մանաւորապէս արգելքներ կան ընդդէմ այն աղջկան, զոր լլկած էր Մուսա-պէյ»։

—

Կ. Պոլսից մեզ գրում են, որ նոր քաղաքական ժողովի ընտրութեան վաւերացումը Բ. Դռնից դեռ չէ ստացվել։

—

Մեզ ուղարկված է հետևեալ նկատողութիւնը տպագրելու համար։ «Գիւղական կեանքին քիչ թէ շատ ծանօթ մարդիկ դիտեն անշուշտ այս կամ այն պարապիտ-միրզի հրամանով գիւղերում տեղի ունեցող անկարգութիւնները, որոնք չարունակ կրկնվում են հարկահանութեան և կամ այլ պաշտօնական գործի ժամանակ։ Անշուշտ շատերի համար թարմ է այն վատ տպաւորութիւնը, որ թողնում էր հետևեալ լուրը՝ «թէ այս ինչ օրը այն ինչ պաշտօնեան իր եաստուկներով պիտի գայ գիւղը»։ Եւ յիրաւի, արդարացի է այդ վատ տպաւորութիւնը։ Անտեղի կերպով պարսկական յիշոցներ տալը և գաղանաբար գիւղացուն ծեծելը, լկտի կերպով-տուն մտնելն ու գիւղացու օյժից վեր բաներ պահանջելը օրինականութիւն էր դարձել այդ տեսակ մարդկանց համար։ Սակայն այժմ, խօսելով հէնց դրանց լեզուով, «ժամանակը փոխվել ու վատացել է, էլ հիւրմաթ չը կայ», գիւղացիք էլ են սկսել իրաւունքներ ճանաչել։ Ինչպէս տեղեկացել ենք, մի քանի գիւղերում հասարակութիւնը մասամբ իր իրաւունքները ճանաչելով և մասամբ յիշեալ անկարգութիւններին վերջ տալու համար, անշուշտ մի խոհեմ մարդու շնորհով, հետևեալ օրինակելի կարգն է դրել։ Օրինակ, հասարակութիւնը իր կողմից առաջարկում է մի որոշ գումար փող, որպէս սենեկակի, վառելիքի և այլ այդպիսի բաների վարձ, և ով աւելի պակասով համաձայնվում է, նա է ստանում, որպէս զի մի որ և է պաշտօնական մարդ եկած ժամանակը, դիցուք գրիստաս, քննիչ և այլն, նա հոգայ սենեկակի, վառելիքի և այլ այդ օրինակ բաների համար, իսկ ինչ ուտելիքմելու համար ծախսելու լինի այդ կապալառուն, նա պիտի ստանայ իր ծախքի համար փող նոյն իսկ պաշտօնական մարդուց։ Այդ բանը մեր գիւղերում մինչև այժմ չէր եղել, և հազիւ թէ գիւղացիք երևակայել անգամ կարող էին թէ պաշտօնական մարդուց ուտել-խմելու համար կարելի է փող վերցնել։ Այդ երևոյթը շատ ուրախալի է գիւղական կեանքի մէջ, բայց որովհետև ամեն մի նոր երևոյթ իր թշնամիներն է ունենում և այդ թշնամիները լինում են այնպիսիները, որոնց շահերին վնաս է պատճառում այդ երևոյթը,—այդպէս էլ մեր յիշած նոր սովորութիւնը ունի իր թշնամիները և դրանք ուրիշ ոչ ոք են, եթէ ոչ գաւառական միրզաները և դրանց նմանները, որոնք սովոր են ժողովրդի քրտինքով ապրել, նրա հիւթով սնվել ու պարարվել։ «Մի՞թէ ամօթ չէ այս ինչ գիւղացիների համար, որ այս ինչ բէգից մի փոր հացի համար փող են առել». «մինչև օրս մի կոպէկ չէ դուրս եկել դրպանիցս ուտել-խմելու համար, այսուհետև պիտի տամ», ահա այն խօսքերը, որ լսում էք նրանցից։ Սակայն, բարեբաղդաբար, այդ խօսքերը այլ ևս տպաւորութիւն չեն թողնում և իրանք գիւղացիք սկսում են սովորել իրանց շահերը պաշտպանելու եղանակը»։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Ամսիս 2-ին ուսումնարանի դահլիճում ժողոված հայ հասարակութեան անդամները ընտրեցին 23 պատգամաւորներ, որոնք իրանց կողմից պէտք է ընտրեն 2 հոգաբարձու և 2 անձնափոխանորդ երկսեռ հոգևոր դպրոցների համար։ Մեր կարծիքով, պատգամաւորների ընտրութիւնը աջող է և յոյս ունենք, որ հոգաբարձական ընտրութիւններն ևս աջող կը լինեն։—Ամսիս 9-ին կայացաւ Կովկասեան Հայոց Բարեգործական ընկերութեան Կարսի տեղական վարչութեան բացումը և կատարվեցան վարչական անձանց ընտրութիւնները։ Ընդհանուր ժողովի նախագահ ընտրվեցաւ փոխանորդ Յուսիկ վարդապետ Մովսիսեանց, քարտուղար՝ պ. Խ. Մառանկոլեանց։ Վարչութեան անդամներ՝ Մինասքահ. Տէր-Պետրոսեանց, տիկիններ՝ Սօֆիա Ղազարեանց և Ն. Մելիք-Փարսադանեանց, բժիշկ Ղազարեանց և բժիշկ Մելիք-Փարսադանեանց։ Փոխ-անդամներ՝ բժիշկ Տէր-Յարութիւնեանց, Ս. Գրիգորեանց և Մ. Մարգարեանց։ Այդ ընտրութիւնը ևս աջող կարելի է համարել։»

—

Այս օրերս Էջմիածնում լոյս է տեսել այն վարժապետների և վարժուհիների ցուցակը, որոնք իրաւունք են ստացել Էջմիածնի հոգևոր իշխանութիւնից հայոց եկեղեցական դպրոցներում ուսուցչութիւն անելու։ Ցուցակի մէջ մտցրած վարժապետների թիւն է 353, իսկ վարժուհիները՝ 147։ Ցուցակագրված վարժապետներից և վարժուհիներից որոշ ցէնզ չէ պահանջվում. վարժապետութիւն և վարժուհութիւն կարող են անել ամենքը, եթէ միայն իրաւունք

դարձնում՝ Պարիզից մինչև Լիոն տանող երկաթուղու գծի մօդէլը և նմանապէս մի մօդէլ, որը ներկայացնում է Պարիզի գլխաւոր փողոցներում երկաթուղային գծեր անցկացնելու մի պրօէկտ։ Այդ երկաթուղիները, մօդէլ չինողի առաջարկութեամբ, պէտք է անցնեն փողոցներում չինված երկաթեայ կամարների վրայով, այնպէս որ փողոցներում անցնող ոչ կառքերի, ոչ էլ հետակների երթևեկութիւնը չի խանգարվի։ Բազմաթիւ մօդէլների թւում կան գործարանների, ֆաբրիկաների, հանքերի, երկաթուղային վագոնների և այլ մօդէլներ։

Մեքենաների պալատի ամենամեծ տարածութիւնը գրաւում է իր մեքենաներով, ի հարկէ, Ֆրանսիան, այնուհետև երկրորդ տեղը բռնում է Անգլիան, երրորդը Շվէյցարիան, ապա Ամերիկայի Միացեալ-Նահանգները և Բելգիան։

Ես մեքենաների մէջ մասնագէտ չը լինելով, ընթերցողը թող չը պահանջի ինձանից որ ես մեքենաների բոլոր բաժինները սիստեմական կերպով նկարագրեմ, թող չը պահանջի որ ես իւրաքանչիւր մեքենայի կազմակերպութիւնը և նշանակութիւնը մասնագիտաբար, մանրամասնաբար և մանրակրկիտ կերպով նկարագրեմ։ Ես ընդհանրապէս կը խօսեմ այստեղ այն մեքենաների մասին, որոնք առանձնապէս աչքի են ընկնում իւրաքանչիւր այցելուին և որոնց բազմաթիւ տպագրված նկարագրութիւնները ես ձեռք բերեցի այցելութիւններիս ժամանակ նոյն իսկ մեքենաների էկսպոնէտներից։

Անտարակոյս չորեմեքենաներից յետոյ մեքենաների պալատի ամենահարուստ և աչքի ընկնող բաժինը էլէկտրականութեամբ գործող մեքենաների և էլէկտրական գործիքների բաժինն է։

Նախ և առաջ մեքենաների բաժնի մէջտեղ երևում է մի ահագին էլէկտրական փարոս, որը երեկոները իր լուսով լուսաւորում է ամբողջ բաժինը, ապա պալատի մի ծայրից դէպի միւս ծայրը շրջում են էլէկտրաշարժ կամուրջներ, որոնց վրա այցելուն կանգնելով, և 7 մէտր գետնի մակերևոյթից բարձր գտնվելով՝ աննկատելի կերպով շրջում է պալատի ամբողջ սրահում և կարողանում է ընդհանուր հայեացք ձգել մեքենաների պալատի վրա։ Էլէկտրական փարոսից ոչ հեռու, ամերիկական բաժնում, զետեղվել է Էդիսոնեան էլէկտրական արդիւնքների ցուցահանդէսը, որը մենակ գրաւում է 675 քառակուսի մէտր տարածութիւն։ Այդտեղ դուք կարող էք ծանօթանալ էլէկտրականութեան հետ, այդտեղ դուք կը գտնէք տէլէգրաֆի, տէլէֆոնի և ֆոնոգրաֆի ամենակատարեալ գործիքները, այդտեղ հանդէս է դրված ամբողջ մի քաղաք լուսաւորելու համար էլէկտրական պատրաստ գործիքների մի սիստեմ, այդտեղ հանճարեղ էլէկտրագործ Էդիսոնի կիսարձանը շրջապատված է 20,000 էլէկտրական լապտերներով.... Մենակ այդ էլէկտրական ցուցահանդէսը, որը սարքել, դասաւորել է Համմէր ինժենէրը, նստել է 400,000 ֆրանկ ահագին դումար....

Ապա աչքի են ընկնում ֆրանսիական բաժնի էլէկտրական բազմատեսակ մեքենաներն ու գործիքները, որոնք իրանց կատարելութեամբ պակաս չեն ամերիկական բաժնի նոյնանման գործիքներից և գերազանցում են անգլիական բաժնի գործիքներից։ Այդտեղ կան հեռագրական և տէլէֆոնեան գործիքներ, էլէկտրական շարժիչներ Պոպպի և Թոմսոն-Հուստոնի սիստեմի, մագնիսաէլէկտրական մեքենաները Մէրիտէնսի սիստեմի, որոնք փարոսների լուսաւորութեան համար են յատկացրած, բեռները բարձրացնող Գիւէնէ ինժենէրի էլէկտրական մեքենան, որը այդքան աջողութեամբ բանել է Էյֆէլեան աշտարակի կառուցման ժամանակ, ահա և Սստէր ու Լըմոնիէ պարոնների գործիքները, որոնց միջոցով լուսաւորվում է էլէկտրական լուսով մեքենաների պալատի մէջտեղ դրված փարոսը.... և այլն։ Ապա չարունակելով էլէկտրականութեամբ հետաքրքրվել, բարձրացէք պալատի երկրորդ յարկը և դուք այնտեղ կը գտնէք գալվանոպլաստիկայի հրաշալի և բազմատեսակ արդիւնքները, այնուհետև էլէկտրական հիանալի և շատ բազադրեալ ժամացոյցները, էլէկտրական համրիչները (compteurs éléctriques), էլէկտրական զանգակների ամեն տեսակները, պ. Տրուվէի սիստեմով շինված այն էլէկտրական հանճարեղ գործիքները, որոնց օգնութեամբ հանքերի խորքը իջնող, կամ ծովերի յատակը խորասուզվող մարդը կարող է իր շուրջ դտնվող տարածութիւնը պայծառ լուսով լուսաւորել։ Ահա ձեր առջև դրված են և ծովային հեռագրական թելերի զանազան տեսակները....

Անցնենք այժմ ընդհանուր մեքանիկայի բաժինը (mécanique générale)։ Այդ բաժինը կազմում է, եթէ այդպէս կարելի է ասել՝ մի պետութիւն պետութեան մէջ.... Մեքանիկան՝ մեքենագործական պալատում։ Այստեղ ամփոփվում են ներկայ դարի մեքենագործական դիւտերի բոլոր արգասիքները։ Այստեղ գտնվում են ամեն տեսակ մեքենաներ և գործիքներ, որոնք բանում են կամ շոգիի, կամ ջրի ոյժի միջոցով։ Ջրի ոյժի միջոցով մղվող մեքենաներում Շվէյցարիան աջողութեամբ մրցում է միւս երկիրների գործիքների հետ. Շվէյցարիան ունի այս բոպէիս աշխարհիս ամենագեղեցիկ և ամենակատարեալ մեքենագործական արդիւնագործութիւն, շնորհով իր երկրի տեղագրական դիրքի։ Շվէյցարիայի արագահոս ջրերը և բազմաթիւ ջրվէժները ժատակարարում են այդ երկրի արդիւնագործութեանը այն անսպառելի, բնական ոյժը, այսինքն ջրաշարժ (hydraulique) ոյժը, որը շարժման մէջ է զցում ամեն տեսակ և ամենաբազադրեալ գործիքներն ու մեքե-

ստանան Էջմիածնից և մոցրված են ցուցակի մէջ։ Հէնց այդ պատճառով վարժապետները և վարժուհիները բաժանված են 13 դասակարգի։ Առաջ ենք բերում այդ 13 դասակարգը. Առաջին դասակարգ՝ աւարտողք ի համալսարանս։ Երկրորդ՝ աւարտողք ի մասնագիտական բաժնի հոգևոր ճեմարանի ս. Էջմիածնի։ Երրորդ. աւարտողք ի թեմական հոգևոր դպրոցս հայոց։ Չորրորդ. ուսեալք ի հոգևոր դպրոցս հայոց և ունողք զվկայական ուսուցչութեան յարքունի դպրոցաց։ Հինգերորդ. ուսեալք յարքունի դպրոցս և ունողք զվկայական ուսուցչութեան յարքունի դպրոցաց։ Վեցերորդ՝. Չունողք զվկայականս աւարտման ընթացից ուսման թեմական հոգևոր դպրոցաց հայոց։ Եօթերորդ՝ աւարտողք ի միջնակարգ դպրոցս պետութեան։ Ութերորդ՝ ունողք զվկայականս ճայնագրութեան։ Իններորդ՝ չունողք զվկայական աւարտման ընթացից ուսման միջնակարգ դպրոցաց պետութեան։ Տասներորդ՝ ուսեալք յօրիորդական հոգևոր ուսումնարանս հայոց։ Տասնմէկերորդ. ուսեալք ի հոգևոր օրիորդական ուսումնարանս հայոց և աւարտողք ի միջնակարգ օրիորդական դպրոցս պետութեան։ Տասներկուերորդ. աւարտողք ի միջնակարգ օրիորդական դպրոցս պետութեան. Տասներեքերորդ՝ ունողք զվկայական ձեռագործութեան։ Այդ 13 դասակարգի ցանկից երևում է, որ վարժապետութեան և վարժուհութեան իրաւունք են ստացել և այնպիսիները, որոնք վկայականներ չունեն, և պետական դպրոցներից ուսուցչութեան վկայական չունեցողները, ինչպէս յայտնի է, հինգ տարի ժամանակ ունեն քննութիւն տալու և օրինական վկայական ձեռք բերելու, հակառակ դէպքում վկայական չունեցողները, որոնք այժմ նոյն իսկ ցուցակի մէջ են մտցրած, պէտք է զրկվեն վարժապետութեան իրաւունքից։

—

Թիֆլիսի Առևտրական բանկի ակցիոներների յուլիսի 26-ին կայացած ընդհանուր ժողովը վճռեց և իրաւունք տուեց բանկի վարչութեանը կառուցանել բանկի սեփական շինութիւն թէ Թիֆլիսում և թէ Բաթումում, բացվելի ճիւղի համար։ Այդ նպատակով որոշվեց ծախսել 135 հազար ռուբլի։

—

Թիւրքաց Հայաստանի Բաղէշ քաղաքից մի մասնաւոր նամակով մեզ գրում են. «Ցեղիս առաջնորդ Խորէն վարդապետ երբ ճամբայ ելած է Մուշ գնալու և անտի Պոլիս, ճանապարհին մի քանի զինուորներ վրա հասած են, թուղթերն առած, և վարդապետն ալ ձերբակալած Մուշի վանքին մէջ։»

—

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալը. «Մշակի» յուլիսի 20-ի համարում, Պետերբուրգից գրած թղթակցութեան մէջ, թուելով այս տարի Պետերբուրգի բարձրագոյն դպրոցներից աւարտած հայերի ազգանունները, Լեռնային դպրոցում այս տարի աւարտած հայերի թւում յիշված չէին երկու հոգի, այն է, պ. Ղուբալով (Թիֆլիսից) և Գրիգոր Կարախանեանց (Շուշուց)»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՔԱՆԻ ԳԻԾ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԻՑ

—

Արհեստի մէջ հայերը Ցաճկահայաստանում գրաւած են բացառիկ ու նշանաւոր տեղ. դարբիններ, տակառագործներ, ատաղձագործներ, հիւսներ, ոսկերիչներ, դերձակներ, կօշկակարներ, պղնձագործներ, ներկարարներ միայն հայերն են։ Մեր վերև յիշած Ցաճկահայաստանի բոլոր քաղաքներում արհեստը հայերի ձեռքն է։ Արհեստը տալով ապահով ապրուստ, տալիս է և կարողութիւն մտածելու յառաջադիմութեան վրայ, և հայ արհեստաւորներն այստեղ ճարպիկ ու առաջադէմ վարպետ են։ Կան շատ վարպետներ՝ որոնք չինում են արդի եւրոպական կատարելագործուած արհեստի ամենանուրբ ու ամենաբարդ կազմութեան արտադրութիւններ։ Եւ սրանով չեն բաւականանում նրանք. աշխատում են իրանք ևս զարգացնել արհեստը ազգային ոգով։ Այդ ձգտումը ընդհանուր է հայ արհեստաւորների մէջ։ Ցուսալի է որ ապագայում, երբ երկրի ներկայ երերուն վիճակը կը լաւանայ և մեքենայագիտութիւնը մուտք կը գործի մեր մէջ, արհեստը նշանաւոր զարգացման կը հասնի հայ արհեստաւորի տաղանդաւոր մտքի շնորհով։

Երկրի մէջ չը կայ նիւթական հարստութիւն. Վանի, Բաղէշի ու Կարինի դրամատէրներից ամենանշանաւորի կարողութիւնը 30,000 ոսկուց աւելի չի անցնում. վերջին թիւը Ցաճկահայաստանի հարստութեան maximum-ն է։ 200 ոսկի ունեցողը լաւ կարողութեան տէր է հաշուում։ Այդ նիւթական կարողութիւններն էլ գտնվում են մի քանի անձանց ձեռք՝ որոնք չը գործածելու պատճառով հաղիւ դրամի ամենացածր շահի 5% են ստանում։ Դրամի չրջաբերութիւնը երկրի մէջ օրէցօր նուազում է, նրա պակասութիւնը աւելի ու աւելի զգալի է դառնում։ Դրամի արժէքը երկրի մէջ բարձր և նիւթի գինը շատ չնչին է։ Պետութեան ֆինանսական անկման պատճառով չը կայ վարկ ու վստահութիւն առևտրական յարաբերութեանց հաստատութեան ու տեսականապէս օգտակար լինելուն։

Հայ ժողովրդի տնտեսական դրութիւնը վատ է. երկրագործութիւնը՝ որ բնակչութեան մեծամասնութեան պարապմունք է, ընկած դրութեան մէջ է։ Երկրագործների մեծ մասը մաշվում են Պոլիս, Թիֆլիս ու այլ տեղեր մի քանի ոսկի ձեռք բերելու համար։ Նրանցից շատերը տասնեակ տարիներ չեն տեսնում տան երեսը։ Կեանքի պահանջները շատանում են չնորհիւ ժողովրդի օտար երկիրներ յաճախելուն. իսկ վաստակի համեմատաբար պակասումը հսկայական քայլերով առաջ է գնում։

Ցաճախում են սովեր, որոնք սպառնում են ամբողջ գաւառներին ամայութեամբ։ Ճանապարհները։ Ահա Վլինտերթուրի ջրաշարժ տուրբինները, մանող մեքենաները, հիւսող գործիքները, բուրդ և բամբակ սանդրող գործիքները, Նօրլիկօնի էլէկտրական մեքենաները, Ցիրիխի ջրաղացները, Էշէր-Վիսի թուղթ պատրաստող ջրաշարժ հետաքրքիր գործիքները, Բաղէլի «Հելվէցիա» սիստեմի էլէկտրական հրէշաւոր մեքենան, Սէն-Գալլէնի ասեղնագործ մեքենաները, և այլն, և այլն....

Անցնենք այժմ Բէլգիայի մեքենաների բաժինը։ Այստեղ աչքի են ընկնում՝ հանքերում գործող մեքենաներին մաքուր օդի հոսանք ներշնչող Կոկերիլ ընկերութեան մեքենաները, Վէրվիէի թել մանող գործիքները, Գէնտի գեղեցիկ չոգեմեքենաները, Շարլերուայի էլէկտրական մեքենաները, Վիլբրեոկի թուղթ և նամակների ծրարներ պատրաստող գործիքներ, սառուց պատրաստող մեքենաները, գուլպաներ և ամեն տեսակ բրդեղէն արդիւնքներ պատրաստող գործիքներ և այլն....

Ամերիկական բաժինը, բացի էլէկտրական հրաշալի մասից, հ..նչպէս է դրել թէև մեծ քանակութեամբ այլ և այլ մեքենաներ ու գործիքներ, բայց նրանք՝ բոլորն էլ աչքի են ընկնում իրանց կոպիտ և անշնորհ արտաքին ձևով և չունեն Ֆրանսիական մեքենաների գեղեցիկ, նուրբ և ճաշակով լի տեսքը։ Ամերիկացին ինքն վերին աստիճանի գործնական մարդ լինելով, ոչինչ նրշանակութիւն չէ տալիս մեքենայի արտաքին դեղարուեստական տեսքին և ձևին, այլ պահանջում է միայն որ մեքենան գործնական և հեշտութեամբ բանող լինի։

Անգլիական մեքենաները թէև իրանց գրաւած տարածութեամբ այժմեան ցուցահանդիսում երկրորդ տեղն են բռնում, բայց իրանց արժանաւորութեամբ ստոր են ամերիկական, շվեյցարական, բէլգիական, բայց մանաւանդ ֆրանսիական մեքենաներից։ Այդպիսով Անգլիան մեքենաների պաշատում վերջին տեղն է բռնում, ինչպէս վըկայում են բոլոր հմուտ մասնագէտները։

Ֆրանսիական մեքենաների բաժինը այցելելու ժամանակ մարդ զարմանում է մանրամասնաբար յիշել անգամ բոլոր մեքենաների տեսակները, այն աստիճան բազմատեսակ են նրանք։ Նախ աչքի են ընկնում քիմիական այլ և այլ արդիւնքներ պատրաստող մեքենաներ, ապա գաղ պատրաստող մեքենաներ և գաղից գործնական կեանքի մէջ օգտվող գործիքներ, ինչպէս օրինակ գաղով տաքացող ուրթներ, գաղով տաքացող վառարաններ, գաղով ջուրը տաքացնելու գործիքներ և այլն։

Անցնենք երկրագործական մեքենաների և սընոնողի նիւթեր պատրաստող գործիքների բաժինը։ Այդտեղ կը տեսնէք հեղուկներ մաքրող մեքենայ, շաքարագործական բաղադրեալ ամեն տեսակ մեքենաներ, հող պարարտացնող ու վարող, հնձող, սերմը ջոկող, սերմը մաքրող, խուրձեր կապող, ամեն տեսակ ազացող մեքենաներ և այլն։ Ապա ձեր առջև հանդէս են դրված հանքագործական մեքենաներ՝ քարեր, ժայռեր, քարածուխ փորող մեքենաներ, մէտալներ ծակող մեքենաներ։ Այնուհետև երևում են փայտ փորագրող և քանդակագործող մեքենաների շարքը, ապակու և բիւրեղի վրա նկարներ, տառեր փորագրող գործիքներ։ Իմ ներկայութեամբ, մի բաժակի վրա, որը այդտեղ առել էի, մեքենան մի ակնթարթում փորագրել էր շատ նուրբ կերպով իմ անուան դիմատառերը....

Ես երբէք չեմ վերջացնի իմ թղթակցութիւնս, եթէ սկսեմ մանրամասնաբար նկարագրել բոլոր մանող, հիւսող, կծիկների վրա թել փաթաթող, կերպասներ գործող, գորգեր գործող, դանտէլներ շինող, մետաքսեղէն պատրաստող, կերպասներ ծալող մեքենաներ և այլն, ապա ճերմակեղէն, շորեր, զգեստներ, կօշիկներ ձեր ներկայութեամբ պատրաստող կարեմեքենաներ, կաշին և կաուչուկ կտրող ու ձեռղ գործիքներ, ձեր աչքի առջև հաց, այլ և այլ խմորեղէն, բիսկվիտներ պատրաստող հացթուխ չոգեմեքենաներ, թուղթ պատրաստող և թուղթ ու կերպասներ ներկող մեքենաներ.... Դժուար կը լինէր ինձ համար նմանապէս նկարագրել տպագրական և տպարանական ամեն տեսակ մեքենաներ՝ տպարանական կատարելագործված մամուլներ, թուղթ կտրող, թուղթ ծալող, թուղթ դարսող մեքենաներ, տառեր ձուլող գործիքներ, վերջապէս այն բոլոր մեքենաները, որոնք գործ են ածվում կատարելագործված տպագրութեան, ձուլման, աուտոգրաֆիայի, վիմագրութեան, կալկոգրաֆիայի, խրոմոլիտոգրաֆիայի մէջ, և այլն։

Թողնում եմ հմուտ ճարտարապետներին զմայլվել ճարտարապետութեան արհեստի արած առաջադիմութեան վրա, գործարանատէրերին և բանուորներին հիանալ այն բազմաթիւ մեքենաներով, որոնք հետզհետէ բռնում են մարդու ձեռագործ աշխատանքի տեղը, պատրաստելով ամեն տեսակ գործիքներ և անասելի աղմուկ հանող հնադարեան դարբնանոցների տեղը բռնելով՝ վարվում են այժմ երկաթի հետ, ինչպէս փափուկ մոմի հետ....

Դուք, անկասկած, կը ներէք ինձ որ ես արդեան մեքենագործական բոլոր հրաշալիքները մանրամասնաբար չը նկարագրեցի ձեզ։ Դուք, երևի, յոգնել էք արդէն իմ այս թղթակցութիւնս կարդալով,—կարող էք ձեզ երևակայել, ուրեմն, որքան աւելի յոգնել եմ ես, ինքս, ստիպված լինելով համ այցելել, համ էլ նկարագրել Պարիզի համաշխարհային ցուցահանդիսի մեքենաների բաժինը։

Գրիգոր Արծրունի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Սոֆիայից գրում են, որ վաղաժամանակեայ են այն լուրերը, որ իբրև թէ Բուլգարիան կամենում է կատարելապէս անկախ հռչակել իրան։

—Սպանիան և Իտալիան բանակցութիւններ են սկսել զինուորական դաշն կապելու համար։

—Պարիզից անապատելի մի նորութիւն են հաղորդում։ Պարիզի կոմսը Բրիւսելում կայանալի ժողովում մտադիր է հարց յարուցանել այն մասին, որ միապետական կուսակցութիւնը վերջնականապէս անջատվի գեներալ Բուլանժէից։

—Հռոմից եկած տեղեկութիւններից երևում է, որ Ֆրանսիան յայտնել է Իտալիային, որ Ֆրանսիան դէմ չէ այն բանին, որ Կրիտէի հարցը վճռվի յօդուտ Յունաստանի։

—Եւրոպական մամուլը այն միտքն է յայտնում, որ վերջին ընտրութիւնների ժամանակ նկատվող կարգը և հանգստութիւնը, այլ և Բուլանժէի կրած պարտութիւնը, համոզեցուցիչ կերպով ապացուցանում են, որ հանրապետական կառավարութիւնը կատարեալ յաղթութիւն տարաւ։

—Պարիզից գրում են, որ բուլանժեան կուսակցութիւնը յուսահատ դրութեան մէջ է ի միջի այլոց և այն պատճառով, որ գաղտնի ագիտացիաների և կաշառքների համար կուսակցութեան արկղում դրամ բոլորովին չը կայ։ Այդ մի մեծ ցաւ է, որովհետև Բուլանժէ իր մի քանի աջողութիւններով պարտական է իր տուած կաշառքներին, որոնց համար նա ահագին գումարներ էր վատնում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հռոմում անձնասպանութիւն գործեց յայտնի վիրաբոյժ և Բոլոնիի պատգամաւոր, պրոֆէսոր Լօրէտտ։ Դեռ նորերս Բոլոնիի համալսարանի շինութեան մէջ կալս էր արված մի պատուաւոր տախտակ Լօրէտի անունով, ի պատիւ ստամոքսի վրա արած նրա մի օպէրացիայի։ Վերջին ժամանակներս Լօրէտտ հիւանդ էր նրանով, որ երևակայում էր թէ իրան հալածում են։

* * *

Կ. Պոլսում յայտնի որբանոցի հիմնադիր Սրբուհի մայրապետի մասին «Արեւելքը» հաղորդում է հետեւեալ՝ մասամբ առասպելախառն մի քանի մանրամասնութիւններ։ «Սրբուհի Մայրապետ, 1822-ին ծնեալ, ընիկ Գարթալցի էր, դուստր Գալֆայեան Նշան ազայի, գիւղին Զօրպաճին՝ տեղական հին ընտանիքէ մը։ Ցան տարեկան եղած ատեն Սրբուհի ժանտախտէ կը բռնուի, և այս անագորոյն հիւանդութեան միջոցին երազ մը կը տեսնէ յորում իրեն կաղդարարուի մայրապետ լինել. կուխտէ ըստ այնմ, և կաղէկնայ։ Շատ գեղեցիկ աղջիկ մ'էր, և 18 տարեկանին մէջ վերջնապէս կորոշէ կոյս մնալ։ Ցոյժ գործունեայ աղջիկ մ'էր Սրբուհի։ Այն ժամանակ մեծապէս յարգ ունէին. ոսկեթել բանուածք որոցմէ ինքն ևս կը բանէր, և կը բանեցնէր տեսակ մը արհեստանոցի մէջ զոր ինք կազմած էր։ Այս կերպիւ 180 ոսկւոյ չափ գումար մը խնայած էր, որ կը լինի Որբանոցին առաջին և միակ դրամագլուխն։ Երբ առաջին տարւոց դժուարութեանց մէջ, այս դրամագլուխն սպառելու վրայ էր, Սրբուհի Մայրապետ ի Գալաթիա գնաց, Հոգեւոր Ժողովոյ Ատենապետ Գրիգոր Արծրունի Աղայի հետ խորհրդակցելու համար։ Ատենապետն ալ ինքն ի բաց թողեր էր զանազան ազգային գործերու հոգը, ամենայն ինչ Սրբուհի Մայրապետի ձեռքն էր

բակէօմբրիկ խորին մտահոգութեան մէջ երազ մը կը տեսնէ, յորում Տիրամօր պաշտպանութեան կապաւինի. Տիրամայրը զինք կը յորդորէ յարատեել և կը խոստանայ աջակցութիւն։ Սրբուհի Մայրապետ իր Որբանոցը կը նուիրէ Աստուածածնայ անուան, և իր յարատևութիւն յաջողութեամբ կը պսակուի։—Իր ձեռնարկութիւնն յատուկ կոնդակներով օրհնած են Գէորգ Կաթողիկոս, Պօղոս Պատրիարք, Պատրիարք Խրիմեան Հայրիկ և Ներսէս Պատրիարք»։

*
* *

Թիֆլիսի հարուստներից մէկը մի մեծ գումար է նուիրել, որով պէտք է ստիպէնդիա հիմնվի այն վրացի երիտասարդների համար, որոնք կը ցանկանան բարձրագոյն ուսում ստանալ։ Հաղորդելով այդ լուրը, տեղական ռուս լրագիրներից մէկը աւելացնում է՝ «սրա մէջ ամենից գլխաւորը այն է, որ նուիրողը,—իսկական հայ է....

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յուլիսի։ Բարձրագոյն մանիֆեստով յայտարարված է, որ յուլիսի 26-ին Պետերգոֆում տեղի ունեցաւ Մեծ Իշխան Պետր Նիկոլաեվիչի և Զերնոգորիայի Իշխանուհի Միլիցա Նիկոլաեվնի ամուսնութիւնը։ Մեծ Իշխան Պետր Նիկոլաեվիչի պսակադրութեանախորդ օրը տեղի ունեցաւ Լէյխտենբերգի դուքս Գէորգ Մաքսիմիլիանովիչի և Զերնոգորիայի Իշխանուհի Անաստասիա Նիկոլաեվնայի նշանադրութիւնը։ Կարկինի բերդապահ զօրքի գլխաւորը հեռագրում է, որ յունիսի 30-ին նորից փորձ եղաւ Աբդուրահմանի կեանքի դէմ։ Ատրճանակ արձակողը մի զինուոր էր, որը վիրաւորեց էմիրի ձեռքը։

ՊԱՐԻԶ, 27 յուլիսի։ Մօտ 2,000 օտար և ֆրանսիացի ուսանողներ՝ հանդիսաւոր շորերով և դրօշակներով այսօր առաւօտեան գնացին ողջունելու Պաստեօրին, որին նրանք ցոյցեր արեցին գոչելով՝ «կեցցէ Պաստեօր»։ Պաստեօրը, որը խորը զգացված էր, շնորհակալութիւն յայտնեց, ասելով ժամանակ, առանձնապէս դիմելով օտար համալսարանների ներկայացուցիչներին, ասեց նրանց, որ Ֆրանսիան երբէք չի մոռանայ իրան ցոյց տուած համակրութիւնները։ Վերջումը պրոֆէսորը աւելացրեց. «յարգանքով խոնարհվում եմ ձեր դրօշների,—ձեր հայրենիքների նշանակների առաջ»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յուլիսի։ Ս. սինոդը մշակել է հոգևոր սեմինարիաներում բժշկութիւն աւանդելու կանոնները և ծրագիրը։ Կանոններ են մշակվում՝ անցագրերը անցատեղներով փոխանակելու համար։ Ցունաց Նիկոլայ և Անդրէյ պրինցները արտաքսման ուղևորվեցին։

ԼՕՆԴՕՆ, 28 յուլիսի։ Գերմանական կայսրը Անգլիայում կը մնայ մինչև ուրբաթ օր։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

—

ԹԷՀՐԱՆ. Պ. Մարգարեան. Ցուլիսի մէկից, «Մշակի» համարները, համաձայն ձեր նամակի, ուղարկվում են Նոր-Զուղայի Մեսրովբեան ընթերցարանին և Թէհրանի հայոց ընթերցարանին։ 1887 թուականի վերաբերեալ խնդրած ձեր տեղեկութիւնը անկարող ենք տալ, շատ հին լինելու պատճառով։ Խմացէք նրանցից, ում ուղարկած էք եղել բաժանորդագիրը։

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼ. Գ. Ս. Զ. Այդպիսի խընդիրքով նեղութիւն կրեցէք Թիֆլիսի լուսանկարներին դիմել։

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍ. Ց. Ք. «Մշակի» № 73-ի մէջ Ագուլիսից դրած լուրի առիթով ձեր ուղարկած պատասխանը, որով ինքներդ ձեզ գովում էք, կը տպագրվէր, եթէ միայն գրված լինէր հայ վարժապետին (ձեր նամակից երևում է, որ դուք վարժապետ էք Ագուլիսի դպրոցներում) վայել հայերէնով։ Նախ հայերէն սովորեցէք, և ապա ինքնագովութեամբ զբաղվեցէք։

Ժամանակաւոր խմբագիր Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՑ

Հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Երևանի թեմական դպրանոցում դասեր ստանալու ցանկացողները կարող են ուղարկել իրանց խնդիրները մինչև օգոստոսի 10-ը և խնդրատուները վերջնական պատասխան կը ստանան այդ օրից յետո, երբ կը կայանայ հոգաբարձական ժողով այդ հարցի մասին։ Տեսուչ դպրանոցի բժիշկ Մ. Ցարութիւնեանց։

Բ. Տ. կը խնդրեմ, որ միւս հայ թերթերը եթէ կարելի է, արտատպեն այս յայտարարութիւնը։ 1—3

ԲԺԻՇԿ ՊՐԷՕԲՐԱԺԷՆՍԿԻ

Մասնաւորապէս բժշկում է էլէկտրականութեամբ, ֆարադէական և գալվանական հոսանքով ձեռքերի և ոտների անդամալուծութիւնից, բլվմատիզմից, ներվային հիւանդութիւններից և կնտրակտուրայից (մկանունքների անդամալուծութիւն), բժշկում է կոյրերին և խուլերին անդամալուծութիւնից և նոյնպէս ընդունում է կանացի հիւանդութիւններով և սիֆիլիսով տկարներին։

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 12 ժամ և երեկոյեան 7 ժամից մինչև 8 ժամ, Միքայէլեան փողոցում, Բէկխանովի տանը, № 103. 1—10

ՇԵՐԱՄԱՊԱՀԱԿԱՆ ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

ՄՕԼՏԻՖԱՈՒՄ (կորսիկա կղզի) և ՎԻԳԱՆՈՒՄ (Գար)

ՇԵՐԱՄԻ ՑԷԼԼԻՒԼԷՐ ՍԵՐՄԵՐ (ՊԱՍՏԵՕՐԻ ՍԻՍՏԵՄ)

BERTRAND ET ALOISI

ՏԱՍ ՄՕԽԱԼԱՆՈՑ ԱՐԿԱԼԻՆԵՐ



ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԻՆ

ԴԵՂԻՆ ԵՒ ՍՊԻՏԱԿ ԿՈԿՈՆՆԵՐ

Bertrand et Aloisi սերմերը գնելու համար դիմել Թիֆլիսի շերամապահական կայարանը, սկսած 1889 թուի հոկտեմբեր ամսից։ 4—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Հինգշաբթի, օգոստոսի 3-ին, ԱՐՄԷՆԻԱ (ARMÉNIE) շոգենաւը, նաւապետ ԳԱՐԻԳ (GARRIGUES) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմէզլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում Նախկին Աւծրունի գալլերէում, № 114. (22 և 29) 2—2

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 4/16 օգոստոսի ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ LE TIGRE (ԼԸ ՏԻԳՐ) նաւապետ NIEL (ՆԻԷԼ), մտնելով Կ. Պոլիս, Պօրտ-Լահօս և Լակավաք։

Ագէնտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆ ՀԵԶՈՒԲԵԱՆՑ, իսկ ԲԱԳՈՒԻ մէջ ԳՕԼԴԼՈՒՍ։ 2—2

С. А. ЕГІАЗАРОВЪ

ИЗСЛѢДОВАНІЯ ПО ИСТОРІИ УЧРЕЖДЕНІЙ ВЪ ЗАКАВКАЗЬИ

ЧАСТЬ I

СЕЛЬСКАЯ ОБЩИНА

Сословный строй, внутренняя организація и управленіе общины въ связи съ землевладѣніемъ, водовладѣніемъ и податнымъ обложеніемъ.

Цѣна 2 р. 75 к.

Продается въ Казани, въ книжномъ магазинѣ А. А. Дубровина.

4—10 (Ь)

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆԶԱՆՑ ՀԱՄԱՐ

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) Առևտրական տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) գեղագրութիւն։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից, Ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլոլակում, Աղէքսանդր Փրիդօնովի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նագորնայա փողոցների անկիւնում, դեղատան դիմաց։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԷՍ եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Ցտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

6—20 (Ե. Շ.)

Լոյս տեսաւ մամուլի տակից

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Նոր տիպի, աշխատասիրութիւն Սահակ քահանայ Սահակեանցի։ Գինն է 35 կ.։ Նոյն անձի աշխատասիրութեամբ լոյս են տեսել

2) ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ հին տիպի, գինն է 30 կոպ.
3) ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ հին-տիպ, գինն է 1—75 կ.
4) ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ հայ կրօնուսոյցների, գինն է 10 կոպ.

Դիմել Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցը։

4—10

ԿԱՆԱՆՑ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ

կամ

ԲԱՐՈՅԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԶԿԱՆԱՆՑ

Այս գիրքը, որ ֆրանսիական ակադէմիայի անդամ և անուանի հնդինակ Էրնէսթ Լէգուվէի երկասիրութիւններից առաջինն է, թէ Ֆրանսիայի և թէ արևմտեան Եւրոպայի մէջ մեծ հռչակ է հանել։ Բարեյիշատակ հանգուցեալ տիկին Թագուհի Մելիք-Ազարեանցը թարգմանել է սորան հայերէն լեզուով, իսկ նորա ամուսին պ. Աղէքսանդր Մելիք-Ազարեանցի հրատարակութեամբ տպագրուած է այսօր։ Գրքի սկզբում դրված է վաղամեռիկ տիկնոջ որդեկորոյս հօր-Ծերենցի յառաջաբանը, իսկ գրքի ճակատին – թարգմանչուհու գրաւիչ լուսանկարը։ Գիրքը բաղկացած է 500 երեսից, մանրատառ. մաքուր տպագրութիւն, և արժէ՝ Պոլիս 15 դահեկան, Թիֆլիզ 1 ր. 50 կոպ. ճանապարհի ծախքով հանդերձ։ Վաճառվում է կենտրոնական գրավաճառանոցում։

5—5

Дозволено цензурою, Тифлисъ 28 Іюля 1889 г.

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.